Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ. հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	«Ինքնուրույն ընթերցանության դասաժամին կիրառվող խաղերը որպես խոսքի զարգացման միջոց 2-րդ դասարանում»
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Անահիտ Թումանյան Ֆելիքսի Դասվար +374 93-11-50-72 anahit.tumanyan.65@gmail.com մայրենի, մաթեմատիկա, ես և շրջակա աշխարհը, երաժշտություն, տեխնոլոգիա, կերպարվեստ 2-րդ

Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Երևանի Ստ. Զորյանի անվան N 56 հիմանական դպրոց Հրաչյա Քոչարի փող., 13 շենք (Արաբկիր վարչ. շրջան) 010 27-20-70 school56@schools.am yerevan_school56@mail.ru https://yerevan56.schoolsite.am/

Բովանդակություն

Ներածություն 3

Հիմնական բովանդակություն 5

Եզրակացություններ, առաջարկություններ 23

Օգտագործված գրականության ցանկ 24

Հավելվածներ

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ինքնուրույն ընթերցելու կարողությունը մեծ քայլ է երեխայի համար դեպի արդյունավետ և նպատակային ուսուցում: Ինչպե՞ս ծանոթացնել և հասու դարձնել սովորողին ընթերցասրահի գրքի պաշարներին և ինչպե՞ս նրա մեջ այդ գրքերը կարդալու հետաքրքրություն և ցանկություն առաջացնել: Հաճախ անավարտ ենք թողնում հեքիաթը կամ պատմվածքը՝ փորձելով հետաքրքրություն առաջացնել երեխայի մեջ և թույլ տալ, որ երեխան հետամուտ լինի ավարտը հորինելուն: Ընթերցանության ժամանակ քննարկումներ ենք կազմակերպում, առանձնացնում կերպարները, երեխաները հիմնավորում են, որ սիրում են այս կամ այն կերպարը, որովհետև նման է իր բարի հորաքրոջը, կամ իրենց բակի հոգատար տատիկին: Երեխան կարդում է ու մտքով հերոսներին մոտեցնում իր աշխարհին, նրան դուր է գալիս մտնել ուրիշ աշխարհ, `գտնել այնտեղ ծանոթ ու անծանոթ կերպարներ: Այս հետազոտական աշխատանքի նպատակն է բոլոր այս հնարներից կոնկրետ «խաղ»-ը կիրառել որպես ընթերցանության զարգացման միջոց:

	Հարց՝ Արդյո՞ք խաղը նպաստում է բանավոր խոսքի զարգացմանը ինքնուրույն ընթերցանության ժամին 2-րդ դասարանում:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	• Լեզվական գրագիտություն • Սովորեցնել սովորել • Ինքնաճանաչողական և սոցիալական • Մշակութային
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Երևանի Ստ. Զորյանի անվան N 56 հիմնական դպրոց 2-րդ դասարան, 30 աշակերտ՝ 15 աղջիկ, 15 տղա
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտությունն իրականացրել եմ դիտարկման միջոցով: Նախքան հետազոտություն աշակերտների հետ քննարկել եմ իրենց իսկ ընթերցած նյութը, ռուբրիկի միջոցով գնահատել, թե որքանով է հարստացել նրանց բառապաշարը, բանավոր խոսքը: Այնուհետև անցել հետազոտությանը:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	05.09 -15.09 2023թ.

Հիմնական բովանդակություն

Գլուխներ/ Պարագրաֆներ

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Մարդուն տվեք ընթերցանության նկատմամբ սեր և այն բավարարելու միջոցներ, ու հազիվ թե ձեզ չհաջողվի նրան դարձնել երջանիկ: **Ջոն Գերշել** **Գլուխ1** **§1. 1. Ի՞նչ է ընթերցանությունը** Ինչպես նշում է անգլիացի պոետ Ադիսոնը. «Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի»: Իսկ ահա հանճարեղ Չարենցը գրքերի աշխարհը անեզր տիեզերքի է նմանեցնում՝ ձոնելով գրքերի հատուկ տաղ: Մարդկության պատմության մեջ չկա մի հանճար, որ բացառի ընթերցանության ու գրքի կարևորությունը: Անգամ գիտնականներն են ապացուցել, թե ինչ կարևորություն ունի ընթերցանությունը մարդու համար: Այն ոչ միայն օգնում է, որպեսզի դառնաք խելացի, այլ նաև կարող է, ըստ էության, բարելավել մեր ուղեղի աշխատանքը: Ինչպես օրինակ, վազքը բարելավում է մեր սրտանոթային համակարգի աշխատանքը, պարբերական ընթերցանությունը բարելավում է հիշողությունը՝ մարզելով մեր ուղեղը: Տարիքի

հետ հիշողությունն ու ուղեղի աշխատանքը թերանում են, սակայն ընթերցանությունը օգնում է դանդաղեցնել այդ գործընթացը՝ ավելի սթափ պահելով միտքը: Ուղեղի հաճախակի վարժանքները կարող են իջեցնել ուղեղի ծերացումը շուրջ 32 տոկոսով: Չնայած նրան, որ ավելի ու ավելի շատ մարդիկ ձեռք են բերում էլեկտրոնային գրքեր՝ արժե հուսալ, որ տպագիր գրքերը չեն պատրաստվում վերանալ: Մարդիկ, ովքեր կարդում են էլեկտրոնային գրքեր, այնուամենայնիվ դեռ շարունակում են կարդալ նաև տպագիր: Եվ չնայած մենք բոլորս կողմնակից ենք թվային հարմարավետությանը, սակայն չենք կարող մեզ զրկել տպագիր գրքեր կարդալու հաճույքից:

Որքան շատ ենք կարդում, այդքան ավելի շատ բաներ ենք իմանում: Լավ գիրքը բացում է մեր առջև մի ամբողջ գիտելիքների աշխարհ՝ սկսած շատ երիտասարդ տարիքից: Գեղարվեստական գրականությունը օգնում է իր ընթերցողներին հասկանալ, թե ինչ են մտածում մյուսները՝ կարդալով այլ մարդկանց հոգեաշխարհի մասին: Ազդեցությունը շատ ավելի մեծ է նրանց համար, ովքեր կարդում են գեղարվեստական գրականություն, ի տարբերություն նրանց, ովքեր կարդում են մասնագիտական գրականություն:

Ընթերցանությունը քնելուց առաջ կարող է օգնել ավելի լավ քնել: Այն դարձնելով

սովորություն՝ մեր ուղեղին ազդանշան ենք տալիս, որ ժամանակն է գնա քնելու: Գրքի ընթերցանությունը մեզ ավելի շատ է հանգստացնում, քան քնից առաջ էկրանին նայելը: Պլանշետների և էլեկտրոնային գրքերի էկրանները, ըստ էության, մեզ պահում են արթուն ավելի երկար և նույնիսկ վնասում մեր քունը: Դա վերաբերում է նաև երեխաներին:

Մանկական գրքերը երեխաների բառապաշարը ավելացնում են ավելի քան 50 տոկոսով՝ ի տարբերություն հեռուստատեսության:

Վաղ տարիքից շատ ընթերցելը հիմք է հանդիսանում հետագայում ավելի բարձր մտավոր ունակություններ ունենալու: Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում:

§1.2 Ինքնուրույն ընթերցանություն

Ինքնուրույն ընթերցանությունը մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական բաժիններից մեկն է: Նրանում են ամփոփվում և նրա միջոցով են իրականացվում երեխաների մեջ կարդալու տեխնիկայի զարգացման, գործնական ճանապարհով մայրենի լեզվի ուսուցման, աշխարհաճանաչողական տարրական գիտելիքների հաղորդման ծրագրային պահանջները: Հենց այդ նկատառումներով էլ ինքնուրույն ընթերցանությունը տարրական

դասարաններում աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր և անփոխարինելի միջոցներից մեկն է: Միշտ դպրոցի հիմնական խնդիրներից եղել և մնում է իր սաներին սովորեցնել սիրել գիրքը, անընդհատ նոր գիտելիքներ քաղել այնտեղից: Իսկ դրան կարելի է հասնել աշակերտների մեջ կարդալու կարողությունը մշակելով: Որքան երեխաների մեջ ամուր և հաստատուն դրվեն ընթերցանության կարողության մշակման հիմքերը, այնքան կարդալը երեխայի համար ավելի շուտ կդառնա գիտելիքների ձեռքբերման կարևոր ու անփոխարինելի միջոց: Ինքնուրույն ընթերցանությունը աշակերտների մտավոր զարգացումը, նրանց նոր գիտելիքների և տեղեկությունների հաղորդումը, լեզվական պաշարի՝ բառերի, դարձվածքների, լեզվական ու արտահայտչական ձևերի և բնորոշ համեմատությունների կուտակումն ապահովող միջոց է, այն նաև լեզվական կարողությունների՝ խոսքի կառուցման, բառերի ու դարձվածքների տեղին ու ճիշտ օգտագործման համաձայնության ու կապակցության և համանման այլ կարողությունների ու հմտությունների մշակման ու զարգացման միջոց է:

§1.3 Ինքնուրույն ընթերցանության կազմակերպման բաղադրիչները

- Զրույց
- Բնագրի ընթերցում
- Բառային աշխատանքը
- Նյութի մշակումը կամ աշխատանք բնագրի վրա
- Բովանդակության վերարտադրում կամ պատմել

Զրույց

Ինքնուրույն ընթերցանության դասերին հաճախ գործադրվում է ամփոփիչ զրույցը: Այն օգնում է գեղարվեստական ստեղծագործություններից բարոյախրատական ու դաստիարակչական հետևություններ անելու, իսկ գործնական բնույթի հոդվածներից՝ անհրաժեշտ գործնական եզրակացություններ բխեցնելու, ինչպես նաև՝ ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութի մեջ առանձնացնելու այն նոր բառերն ու լեզվական ձևերը, որոնք երեխաները սովորել են նրանից՝ դրանով իսկ շեշտելով ուսումնասիրվող յուրաքանչյուր բնագրի լեզվական արժեքը:

Բնագրի ընթերցում

Բնագրի ինքնուրույն ընթերցումը կարող է իրականացվել մի քանի ձևով՝ ձայնով կամ

բարձրաձայն, լուռ, խմբովին, դերերով, ընտրովի, բացատրելով կամ մեկնաբանելով և անգիր, որոնցից ամեն մեկն ունի գործադրման իր որոշակի ոլորտներն ու ձևերը: Տարրական դասարաններում աշակերտները թե դասարանում և թե տանը գրքի վրա աշխատելիս ավելի շատ պետք է ձայնով կարդան, քան լուռ, որովհետև թե կարդալու տեխնիկայի մշակման ու կատարելագործման, և թե կարդացածը հասկանալու տեսակետից այս տարիքում երեխաների համար սեփական ձայնի ունկնդրումը բացառիկ կարևոր նշանակություն ունի: Լուռ կարդալն իր որակով ու դրսևորման ձևով, ըստ էության, մտովի կարդալ է, որովհետև իրականացվում է միայն աչքերի շարժումով: Դերերով կարդալը ևս տարրական դասարաններում կարդալու ամենաարդյունավետ ձևերից մեկն է և գործադրվում է գրեթե բոլոր դասարաններում: Այն օգտագործվում է որպես կարդալու տեխնիկայի, հատկապես արտահայտչականության մշակման միջոց:

Բառային աշխատանք

Կրտսեր դպրոցում՝ հատկապես 2-րդ դասարանում անծանոթ բառերի ու դարձվածքների բացատրման հիմանական ու հուսալի եղանակը բառը առարկայով բացատրելն է: Բառերի բացատրության

	ամենատարածված ձևերից մեկն էլ բառը նկարով բացատրելն է: Բառերի բացատրման ամենատարածված ձևերից մեկն էլ բառը բառով փոխարինել է, երբ անծանոթ բառի դիմաց դրվում է ծանոթ ու հայտնի բառ: Անծանոթ բառերի բացատրման ձևերից մեկն էլ բառերի բառակազմական վերլուծությունն է: 2-րդ դասարանում ընթերցվող բնագրերում հանդիպող բազմիմաստ բառերի ոչ բոլոր իմաստներն է, որ պետք է բացատրել երեխաներին, որովհետև այդ դեպքում երեխաները երկրորդական և հիմնական իմաստները կշփոթեն և չեն կարողանա բառերը տեղին ու ճիշտ օգտագործել: Պետք է բացատրել բառի միայն այն իմաստը, որ այն օգտագործվում է տվյալ բնագրում, բառի մյուս իմաստների բացատրումը պետք է թողնել այլ առիթների: Նոր բառերի շուրջ տարվող բացատրական աշխատանքն ունի երկու կողմ՝ անծանոթ բառերի բացատրում և բացատրած բառերի ուսուցում: Ուսումնասիրվող բնագրի շուրջ տարվող բառային աշխատանքների մասին խոսելիս չպետք է մոռանալ նաև բառատետրերի մասին: Բառերի բացատրման ու յուրացման ուղղությամբ տարված այս աշխատանքները անկասկած կնպաստեն ոչ միայն բնագրի ճիշտ ընկալմանն ու գիտակցորեն կարդալուն, այլև կհարստացնեն երեխաների բառապաշարը, կզարգացնեն

նրանց խոսքն ու մտածողությունը, որովհետև յուրաքանչյուր բառ իր որոշակի արժեքն ունի մարդու խոսքի ու մտածողության համար:

Նյութի մշակում կամ աշխատանք բնագրի հետ

Նյութի հետագա մշակումը կամ բնագրի վրա տարվող աշխատանքը սովորաբար անցկացվում է աշակերտների ընթերցումից հետո, այս աշխատանքի նպատակը ուսումնասիրվող նյութի բովանդակությունը երեխաների համար հնարավորին չափ պարզ դարձնելը, գործող անձերի ու դրանց գործողությունների ընդհանուր բնութագիրը տալը և դրանով իսկ երեխաներին ճիշտ ուղու վրա դնելն ու նյութի յուրացումն ապահովելն է: Ուսուցչի ու աշակերտների ընթերցումից հետո պետք է միայն մի քանի ընդհանուր բնույթի հարցեր տալ՝ պարզելու համար, թե երեխաներն արդյոք հասկացե՞լ են, թե ու՞մ կամ ինչի՞ մասին է ուսումնասիրվող նյութը, ո՞վ կամ ովքե՞ր են նրա հիմնական գործող անձը կամ անձերը, ե՞րբ և որտե՞ղ է կատարվել այդ դեպքը, ի՞նչ կարծիքի են գործող անձերից յուրաքանչյուրի և ամբողջ բնագրի մասին, ի՞նչը կամ ինչու՞ դուր եկավ իրենց, ի՞նչը և ինչու՞ դուր չեկավ և այլն: Այս հարցերի շուրջ բացված աշխույժ և հետաքրքրական զրույցն աշակերտներին

հնարավորություն է տալիս թափանցելու նյութի խորքը, հասկանալու բովանդակության մանրամասները, որոնք առաջին ընթերցման ժամանակ չեն հասել երեխաների գիտակցությանը: Այս տեսակետից հատկապես ուշադրության է արժանի նյութի դաստիարակչական (գաղափարական, բարոյական ու գեղագիտական) կողմի ճիշտ ընկալումը, որը միշտ չէ, որ հեշտությամբ հասնում է երեխայի գիտակցությանը:

Բովանդակության վերարտադրում կամ պատմել

Ուսումնասիրվող բնագրի բովանդակության վերարտադրումը նրա վրա տարվող աշխատանքի հիմնական ձևերից մեկն է: Մեր դպրոցներում պատմելը կամ բովանդակության վերարտադրումն ավելի շուտ դիտվում է որպես կարդացածի յուրացման միջոց և ոչ թե ուսուցման նպատակ, մինչդեռ մայրենի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկն էլ պատմելու ուսուցումն է, որը նույնքան կարևոր է, որքան և կարդալու կամ գրելու ուսուցումը: Այլ բան է, երբ պատմելը դիտվում է որպես ուսուցման միջոց կամ սովորածը ստուգելու միջոց, և բոլորովին այլ, երբ դիտվում է որպես ուսուցման նպատակ: Առաջին դեպքերում այն կիրառվում է ըստ

	անհրաժեշտության՝ որևէ նպատակի հասնելու համար, իսկ երկրորդ դեպքում այն նպատակն է և համանման բազմաթիվ միջոցներ ենք գործադրում այդ նպատակը իրականացնելու համար: Հարկավոր է նաև նշել, որ պատմելիս աշակերտներին չպետք է ընդհատել, որովհետև ընդհատելիս կտրվում է երեխայի մտքի թելը, խախտվում են նրա մտքի տրամաբանական կապերն ու ամբողջականությունը, որը բացասաբար է անդրադառնում երեխայի մտածելու և խոսելու կարողությունների զարգացման վրա: Պատմելիս պետք է ուշադիր լսել աշակերտին և ապա հանգամանորեն նշել նրա պատմածի դրական ու բասացական կողմերը, իսկ երբեմն էլ դասարանում քննարկման դնել, որպեսզի աշակերտներն իրենք գնահատեն իրենց ընկերոջ պատմածը: Դա կբարձրացնի աշակերտների ակտիվությունը, կսովորեցնի պահանջկոտ լինել ինչպես իրենց ընկերոջ, այնպես էլ իրենց խոսքի նկատմամբ: Պատմելու ուսուցման մասին խոսելիս, բնականաբար, չի կարելի շրջանցել ուսուցչի պատմելը, որը պատմելու ուսուցման համար կարևոր նշանակություն ունի:
Հետազոտության ընթացքը	Գլուխ **2** **§ 2.1 Խաղը որպես խոսքի զարգացման միջոց 2-րդ դասարանում**

Ինքնուրույն ընթերցանության դասն էլ ավելի հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր լինեն երեխաների համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթան են աշակերտների ստեղծագործական միտքի: Խաղն այդպիսի հնար է, որը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից: Ընդհանրապես կրտսեր դպրոցականի համար խաղը ճանաչվում է որպես գործունեության հիմնական ձև: Գործունեության այս ձևը հատկապես կարևորվում է տվյալ տարիքային խմբի համար: Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի համար առաջատար գործունեություն արդեն սկսում է դառնալ ուսումը: Բայց այդ դպրոցականը, որը դեռ երեկ տարված էր իր զվարթ խաղերով, չի կարող լիովին զերծ մնալ դրանից: Այդ իսկ պատճառով, երբ ուսուցումը համեմվում է խաղերով,դրանք երեխաների համար դառնում են ավելի հետաքրքիր, սրտամոտ ու ցանկալի:

Երբ խաղը մուտք է գործում մանկավարժական գործընթացի մեջ, դասարանում ստեղծվում է մի նոր, յուրահատուկ միջավայր: Այդ մթնոլորտը հնարավորություն է տալիս, որ աշակերտներն անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը: Խաղի ժամանակ երեխան ավելի լավ է կենտրոնանում և հեշտությամբ է մտապահում առաջին անգամ տեսածն ու լսածը:

	Այսպիսով, խաղի միջոցով ոչ միայն ուսուցանվում և ամրապնդվում է դասանյութը, այլև ավելի հետաքրքիր ու համեմված են դառնում ինքնուրույն ընթերցանության դասաժամերը: Ուսուցման գործընթացում կիրառվող խաղերն ներկայացվում են որոշակի մանկավարժական պահանջներ: Դրանցից ելնելով՝ անհրաժեշտ է խաղն այնպես ընտրել,որ համապատասխանի ուսումնասիրվող թեմային,աշակերտների տրամադրություններին ու տարիքային առանձնահատկություններին, ինչպես նաև օգնի՝ ճիշտ ըմբռնելու անցածն ու անցնելիքը: Ինչպես ցանկացած մանկավարժական հնար, ուսումնական տեխնոլոգիա, այնպես էլ հետաքրքրաշարժության տարրերով հարուստ խաղը կարող է նույնիսկ ձանձրացնել երեխաներին,եթե չփոփոխվի ու անընդհատ կրկնվի նույնությամբ: Այդ իսկ պատճառով խաղը պետք է կիրառվի ստեղծագործաբար: Փորձը ցույց է տվել,որ կրտսեր դպրոցականների միջավայրում խաղն առավել արդյունավետ է լինում, եթե մինչև կիրառումը քննարկվում է աշակերտների հետ: Երբ հաշվի են առնվում երեխաների առաջարկությունները,խաղը դառնում է ավելի հետաքրքիր: Աշակերտները մեծ հաճույքով ու առանց պարտադրանքի ներգրավվում են ուսումնական գործընթացի մեջ:

	Առհասարակ խաղն ուսուցման գործընթացում օգնում է բազում նպատակների իրականացմանը: Լուծվում են ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական բազմապիսի խնդիրներ, ինչպիսիք են կարգապահություն,հաղորդակցում, իրար լսելու կարողություն, համագործակցություն և այլն: **Ներկայացնում եմ հետազոտության ընթացքը .** Խաղը նախատեսված է 30 հոգանոց 2-րդ դասարանի համար: Կազմել 10-ական աշակերտից բաղկացած 3 խմբեր (յուրաքանչյուր խմբում 10 աշակերտ): Նախքան աշխատանքը սկսելը տեխնոլոգիայի ժամին կտրտել ենք կարմիր, կանաչ, դեղին տերևներ և պատրաստել պաստառ՝ որի վրա պատկերված է հսկա ծառի բունը՝ ճյուղերով: Ծառի վրա նկարել ենք աչքեր, քիթ ու բերան: Բարի ժպիտը էլ ավելի ոգևորեց երեխաներին:



Այնուհետև սովորողները 2-րդ դասարանի ինքնուրույն ընթերցանության դասագրքից ընթերցված նյութը բարձրաձայն կարդացին: Քննարկեցինք նյութը, բացատրեցի առաջադրանքը, միասին մշակեցինք խաղի կանոնները. Խմբերին բաժանեցի դեղին, կարմիր և կանաչ տերևները: Երեխաները նախապես տերևների ետևում գրեցին իրենց անունները: Խմբերից յուրաքանչյուրին տրվեց մի խոսքի մաս, ըստ խմբերի՝ դեղին-առարկա, կարմիր -հատկանիշ, կանաչ - գործողություն: Աշակերտները բնագրից լուռ ընտրեցին խոսքի մասն ու գրեցին տերևի վրա: Ով շուտ վերջացրեց, մոտեցավ և փակցրեց ծառի ճյուղին

իր տերևը: Արդյունքում խմբերից յուրաքանչյուրը ստուգեց մյուսի առաջադրանքի ճշտությունը (կարմիրը դեղինի, դեղինը կանաչի, կանաչը կարմիրի): Քանի որ նախապես տերևների ետևում գրվել էին աշակերտների անունները, սովորողները իմացան, թե ով լավ չի յուրացրել խոսքի մասերը: Հաղթեց այն խումբը, ով անսխալ կատարեց առաջադրանքը, իսկ սխալ գրված խոսքի մասը <<ծառից պոկվեց և արմատների մոտ փակցվեց մինչև մյուս խաղը:

Այսպիսով սովորողները «Աղավնիները» դասից ընտրեցին խոսքի մասեր:

ԴԵՂԻՆ -ԱՌԱՐԿԱ	ԿԱՐՄԻՐ -ՀԱՏԿԱՆԻՇ	ԿԱՆԱՉ- ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ
Աղավնի	Սպիտակ	Վազել
Տղա	Ուրախ	Կանչել
Ճնճղուկներ	Գեղեցիկ	Բարկանալ
Արտաշես	Չարաճճի	Փշրել
Թոռնիկ	Համարձակ	Խռովել
Տատիկ	Անհամարձակ	Կտցահարել
Ծառեր	ճարպկորեն	Քայլել
Տոտիկ	Շփոթված	Վերջացնել
Ձեռք	Արագ	Թռչել
Հաց	Փոքրիկ	Ուտել

Այս ամենի արդյունքում ստացվեց մի ծառ,որը խորհրդանշում է դասարանը, իսկ տերևները՝ աշակերտները:

Խաղի շնորհիվ լուծվեց թե՛ ուսումնական, թե՛ կազմակերպչական և թե՛ դաստիարակչական խնդիրներ:

Ներկայացնում եմ հաջորդ խաղը.

	<<ՖՈՐՏ ԲՈՅԱՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ>> Յուրաքանչյուր գրպանիկում 3 հարց է տեղադրված, որը ընտրովի տարբերակով քաշում է աշակերտներից 3-ը: Գրպանիկներին ամրացված են փայլաթիթեղից պատրաստված բանալիներ: Ճիշտ պատասխանելու դեպքում բանալին մնում է խմբի մոտ: Սխալ պատասխանելու դեպքում՝ մնում է գրպանիկում: Առաջին փուլն ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ կամ շարք հաշվում է, թե 3 հարցից քանիսին է պատասխանել և քանի բանալի ունի: Նույնությամբ անց են կացվում հաջորդ 2 փուլերը,ապա՝հաշվում բանալիները:Սուպերխաղն անց է կացվում միայն խմբերի ղեկավարների հետ: Հաղթում է այն խումբը,ով շատ բանալիներ է կարողանում ձեռք բերել:Հաջորդ խաղերին իրավունք է տրվում,որ հենց հաղթող խումբը կազմի թեմատիկ ամփոփման հարցերը: Ստվարաթղթից կտրել ենք բանալիներ և երկու կողմից սոսնձել փայլաթիթեղ: Գրպանիկները պատրաստելու ամենահարմար եղանակը օրիգամի բաժակն է: Գրպանիկներում նախապես տեղադրել եմ կազմած հարցերը՝ «Աղավնիներ» (II դասարանի ինքնուրույն ընթերցանություն) պատմվածքից:

Փոքրիկ թղթերի վրա գրել եմ տվյալ բաժնի թեմատիկ նյութերից հարցեր: Իսկ պատասխանի համար գծել դատարկ վանդակներ:

Այսպիսով,ձեզ ենք ներկայացնում եմ հարցաշարը:

1. «Աղավնիներ» պատմվածքում, ո՞ր թռչունը չվող չէ:

Ճ	Ն	Ճ	Ղ	ՈՒ	Կ

2. Հնում օգտագործել են որպես կապի միջոց՝ նամկատար.

Ա	Ղ	Ա	Վ	Ն	Ի

3. Ի՞նչ են խորհրդանշում աղավնիները:

Խ	Ա Ղ	Ա	Ղ	ՈՒ	Թ	Յ	ՈՒ	Ն

4. «Աղավնիներ» պատմվածքում, ո՞վ էր կերակրում թռչուններին

Ա	Ր	Տ	Ա	Ծ	Ե	Ս	Ը

5. Արտաշեսը տատիկի ձեռքից վերցրեց հացը, որպեսի կերակրի .

Ճ	Ն	Ճ	Ղ	ՈՒ	Կ	Ն	Ե	Ր	Ի	Ն

Այսպիսով սովորողները խաղի միջոցով մեծ ոգևորվածությամբ յուրացրեցին մատուցված նյութը:

Նախքան հետազոտությունը արված վերլուծություն:

Առարկա	Հատկանիշ	Գործողություն
40%	**35%**	**20%**



Հետազոտությունից հետո արված վերլուծություն:

Առարկա	Հատկանիշ	Գործողություն
60%	**55%**	**45%**



Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հետազոտության ավարտին ռուբրիկի միջոցով իրականացրել եմ սովորողների խոսքի գնահատում: Տվյալների վերլուծությունը ստորև տեղադրված աղյուսակում. Ա.հ **Առարկա 20%** **Հատկանիշ 20%** **գործողություն 25%** Հետազոտության վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ ինքնուրույն ընթերցանության դասին «խաղ»-ը սովորողների խոսքի զարգացման համար արդյունավետ միջոց է . Այն զարգացնում է սովորողների բառապաշարը կապակցված խոսքը, քննական մտածողությունը: Ձևավորում է նաև. լեզվական գրագիտություն, սովորեցնել սովորել, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություններ: Հետազոտության արդյունքների հիման վրա կարող եմ պնդել, որ խաղը նպաստում է բանավոր խոսքի զարգացմանը ինքնուրույն

	ընթերցանության ժամին հատկապես 2-րդ դասարանում:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ. Հ., «Մայրենիի ուսուցման մեթոդիկա», 2018, Երևան, Զանգակ, 344 էջ:
2. Գյուլամիրյան Ջ., «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», 2015, Երևան, Զանգակ, 316 էջ:
3. Տեր-Գրիգորյան Ա.,«Ընթերցանության մեթոդիկա», 1978, Երևան, Լույս, 246 էջ:

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	